ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2, տարածք 251

հեռ. (+374 11) 700 100, էլ. փոստ՝ info@globalcredit.am

Ինտերնետային կայք՝ www.globalcredit.am

Հաշվետվություն թիվ 1, 17.04.2019

2019թ. ապրիլի 10-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը որոշում է կայացրել.

1. մինչև 2019թ. ապրիլի 15-ը (առաջին փուլ) և մինչև 2019թ. հունիսի 30-ը (երկրորդ փուլ) «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի չորս բաժնետերերին համամասնորեն ըստ իրենց բաժնեմասերի վճարել 2018թ. տարեկան արդյունքներով հաստատված շահաբաժիններ (շահաբաժինների առաջին փուլով վճարումը կատարվել է ս.թ. ապրիլի 12-ին)
2. մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից լրացուցիչ հասարակ բաժնետոմսեր և բաժնետերերի միջև համամասնորեն ըստ նրանց մասնակցության չափի, ամբողջությամբ տեղաբաշխել լրացուցիչ 500,000 (հինգ հարյուր հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմս, յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով,
3. մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը լրացուցիչ հասարակ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Կանոնադրական կապիտալի համալրումից հետո իրականացնել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամով արտոնյալ բաժնետոմսերի թողարկում: